ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունվարի 2025 թվականի N: 11 -Ա քաղաք Գյումրի

«ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից ՀՀ Շիրակի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կարիքների համար՝ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով 2024 թվականի նոյեմբերի 18-ին հայտարարվել է «ՀՀ ՇՄԱ ԳՀԱՊՁԲ 24/12» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի մրցույթ, որի արդյունքում, թվով 4 մասնակիցներից, հաղթող է ճանաչվել «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն:

Մրցույթի արդյունքի ամփոփումից հետո պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և արձանագրությունը 2024 թվականի նոյեմբերի 28-ին հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգի www.gnumner.am կայքում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում՝ 10 աշխատանքային օրում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 2024 թվականի դեկտեմբերի 11-ին, էլեկտրոնային եղանակով, «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին է ներկայացվել

պայմանագրի նախագիծը, որը օրենքով սահմանված ժամկետում ՍՊԸ-ի կողմից չի ստորագրվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ առկա են «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերություններով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է